

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

- 1.1 ՀՀ կառավարության որոշումներ -----2
- 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ-----3

2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 5

- 2.1 Ծրագրեր և կատարողականություն -----5
- 2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----6
- 2.3 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում -----6
- 2.4 Հարկային և մաքսային թվերի համառոտագիր -----7

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ԶՅ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 27-ի N 887 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	24 սեպտեմբերի 2010թ., N 1241-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 48 (782), 06.10.2010թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հանվել է ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ հսկողությունը գրանցամատյանների վարման միջոցով իրականացնելու, ինչպես նաև տարանցիկ փոխադրվող ապրանքների համար մուտքի մաքսային մարմնում լրացվող 3 օրինակ հայտարարագրերից առաջին օրինակը մուտքի մաքսային մարմնի կողմից և երրորդ օրինակը ելքի մաքսային մարմնի կողմից վերադաս մաքսային մարմին ուղարկելու, ինչպես նաև ապրանքների բացթողնման վերաբերյալ մուտքի մաք-

սային մարմնի կողմից ուղարկված ռադիոհեռագիրը վերադաս մաքսային մարմնի կողմից ելքի մաքսային մարմին ուղարկելու և ՀՀ մաքսային տարածքից ապրանքների վերջնական արտահանումից հետո ելքի մաքսային մարմնի կողմից վերադաս մաքսային մարմին ռադիոհեռագիր ուղարկելու պահանջը, քանի որ բոլոր տվյալները տեսանելի են մաքսային հայտարարագրի լրացման ավտոմատված համակարգչային ծրագրում, և հսկողությունն իրականացվում է վերոնշյալ համակարգչային ծրագրի միջոցով:



1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության անընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի հուլիսի 3-ի N 08-Ն հրամանում լրացում կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	27 սեպտեմբերի 2010թ, N 2208-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 23(375), 15.10.2010թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով լրացում է կատարվել ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 2008թ. հուլիսի 3-ի «Հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի հիմնավորվածության, օրենքով սահմանված կարգով ներկայացվող տեղեկությունների ճշտության արձանագրման ուսումնասիրության արձանագրության ձևը հաստատելու մասին» N 08-Ն հրամանում, որով հաստատվում է հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի մեծության արձանագրման նպատակով իրականացվող ուսումնասիրության արդյունքներով պետական բյուջե վճարման կամ հաշվանց-



ման (պակասեցման) ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի մեծության արձանագրության ձևը՝ համաձայն հրամանի Ներդիր N 4-ի:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի կիրառման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի պաշտոնական պարզաբանում 01.10.2010թ, N647-Ն, 05.10.2010թ. N11
Ամսաթիվը և համարը	01.10.2010թ, N647-Ն, 05.10.2010թ. N11
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 23(375), 15.10.2010թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում տույ-

ժեր չեն հաշվարկվում, եթե ամբողջ տարվա համար (այդ թվում՝ մինչև շահութահարկի ամսական կանխավճարների ինքնուրույն

որոշման մասին գրավոր դիմումի ներկայացումը) հաշվարկված կանխավճարների վճարված գումարների հանրագումարը գերազանցում է տվյալ տարվա հաշվարկված փաստացի շահութահարկի 75%-ը, իսկ այդ պայմանը չապահովելու դեպքում տույժերը հաշվարկվում են ռեզիդենտի կողմից ամսական կանխավճարների մեծությունն ինքնուրույն որոշելու մասին գրավոր հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող առաջիկա կանխավճարային մուծման վճարման ժամկետից սկսած:



Փաստաթուղթ	«Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվող սահմանաչափի վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում տուգանքի կիրառման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	01.10.2010թ, N648-Ն, 05.10.2010թ. N12
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 23(375), 15.10.2010թ.

Համառոտ նկարագիր

«Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների կիրառման և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված նորմի («հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող 3 տարին լրանալուց հետո») համադրման հետ կապված հարցերի ճշտման նպատակով պարզաբանվում

է, որ հարկման կարգերի փոփոխությունը (պարզեցված հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցումը), «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, տեղի է ունենում 2007 թվականի ապրիլի 1-ից, և «Պարզեցված հարկի մասին» 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով սահմանված տուգանքը կիրառելի է, եթե խախտումը հայտնաբերվել (արձանագրվել) է մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը:

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	01.10.2010թ, N646-Ն, 05.10.2010թ. N13
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 23 (375), 15.10.2010թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ յուրաքանչյուր հաշմանդամ վարձու աշխատողի հաշվով համախառն եկամտից կատարվում են հետևյալ նվազեցումները՝

1. հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ծախսերի չափով՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին (հարկվող շահույթը որոշելիս՝ համախառն եկամտից դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով նվազեցումների կատարում) և 32-րդ հոդվածին (համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումների կատարում) համապատասխան.

2. Հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ծախսերի 150%-ի չափով՝ որպես համախառն եկամտից կատարվող այլ նվազե-



ցում (անգամ եթե աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները չեն հանդիսանում համախառն եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ ծախս):

2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

2.1 | Ծրագրեր և կատարողական

2.1.1 | Ծրագրեր և կատարողական /մաքսային ծառայության մասով/

Սույն թվականի հոկտեմբերի 5-ից 8-ը Համաշխարհային մաքսային կազմակերպության աջակցությամբ Հայաստանում անց է կացվել աշխատաժողով, որի նպատակն էր աջակցել ռիսկերի կառավարման մշակույթի ներդրմանը մաքսային համակարգում և նպաստել ռիսկերի գնահատման կիրառմամբ մաքսային հսկողության համակարգի կատարելագործմանը՝ հաշվի առնելով, որ ռիսկերի կառավարումը մաքսային վարչարարության առանցքային մեխանիզմներից մեկն է և բխում է 21-րդ դարի մաքսային ծառայության մարտահրավերներից: Աշխատաժողովին մասնակցում էին մոտ 20 եվրոպական երկրների ներկայացուցիչներ: Աշ-



խատաժողովի ընթացքում մասնակիցները ծանոթացան ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքներին, տարբեր երկրներում կիրառվող ռիսկային չափանիշներին, ռիսկե-

րի գնահատման մեթոդներին, որոնց հիման վրա էլ մասնակիցների կողմից կատարվեցին և ներկայացվեցին համապատասխան վերլուծություններ:

2.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

2.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.09.2010թ-ից մինչև 20.10.2010թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել են թվով 13 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 102 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.09.2010թ-ից մինչև 20.10.2010թ-ն ընկած ժամանակահատվածում լսվել է թվով 16 բողոք, որից.

- բավարարվել է 3 բողոք,
- բավարարվել է մասնակի 1 բողոք,
- մերժվել է 12 բողոք:

2.3 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

2.3.1 | Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/

2010թ. հոկտեմբերի 1-ից 6-ը կայացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով հերթական մրցույթը, որին մասնակցելու դիմում էին ներկայացրել 581 քաղաքացիներ: Մրցույթի արդյունքում համալրվել է հարկային ծառայության 29 թափուր պաշտոն: 2010թ. սեպտեմբերի 27-ին ավարտվեց ՊԵԿ վերադաս մարմնի հարկային ծառայողների ատեստավորման գործընթացը: Ատեստավորմանը մասնակցել են 184 հարկային ծառայողներ: Ատեստավորված հարկային ծառայողներից 7-ը մրցութային և ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Նրանցից 6-ը ազատվել է աշխատանքից, իսկ 1-ը՝ իջեցվել զբաղեցված պաշտոնից: ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի 15.10.2010թ. որոշմամբ 2010թ. նոյեմբերի 18-ին անցկացվելու է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային /տարածքային/ տեսչությունների և վերադաս հարկային մարմնի ատեստավորման



ենթակա, սակայն ժամանակավոր անաշխատունակության պատճառով ատեստավորումից բացակայած հարկային ծառայողների ատեստացիան:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ս/թ սեպտեմբերի 6-ից մինչև 30-ը կազմակերպված «Հայաստանի հարկային համակարգ» ուսումնական դասընթացը ավարտել են 45 քաղաքացիներ:

2.4 | Զարկային և մաքսային թվերի համառոտագիր

2.4.1 | Զարկային վիճակագրության մի քանի թվեր


1	Ցուցանիշ	2010 թվական		
		Սեպտեմբեր	հունվար-սեպտեմբեր	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-սեպտեմբեր)%
2	3	4	5	
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ	1,293.0	11,180.0	93.8
2	Զարկային մարմնի կողմից պետբյուջե հավաքագրված եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	37,039.1	330,241.5	115.5
2.1	ԱԱՀ	9,792.2	79,707.7	137.1
2.2	Շահութահարկ	5,802.1	59,273.4	94.0
2.3	Ակցիզային հարկ	487.4	5,030.9	118.7
2.4	Եկամտահարկ	6,627.0	54,573.7	128.7
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	9,603.7	84,207.0	113.6
2.6	Այլ	4,726.6	48,283.4	109.7
3	Զարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	3,074.0	21,167.0	98.3
4	Զարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	1,585.2	19,550.3	84.3

2.4.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		հունվար-սեպտեմբեր	Սեպտեմբեր	հունվար-սեպտեմբեր	սեպտեմբեր	հունվար-սեպտեմբեր	Սեպտեմբեր
2	3	4	5	6	7	8	
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	158 175	20 848	194 012	22 637	122.7	108.6
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	1 007 862	138 535	1 294 049	156 617	128.4	113.1
2.1	Արտահանում (մլն դրամ)	197 623	27 293	267 859	38 994	135.5	142.9
2.2	Ներմուծում (մլն դրամ)	810 239	111 243	1 026 190	117 623	126.7	105.7
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	17 729	3 311	19 998	4 143	112.8	125

ևս մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



եռամսյա պարբերականությամբ
հրատարակվում են
«Հարկատու» և «Մաքսատուն»
ամսագրերը